ՊԱՇՏՊԱՆ ԱՆԴԱՄՔ

ԾԽ. ԴՊՐՈՑԱՑ ԵՐԿՈՒՑ ՍԵՌԻՑ ՀԱՅՈՑ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ.

Լոմբատրո-Ռիեան Էջերաց ամսագրոյ.

Հոգաբարձութիւն Աստրախանայ Հայոց ծխական երկսեռ Հոգևոր Դպրոցաց՝ ի ցոյց երախտագիտական զգայմանց և գոհունակութեան իւրոյ առ բարեգործ երկսեռ Անդամ Դպրոցաց՝ խոնարհաբար խնդրէ ի խմբագրութենէ՝ տպագրութեամբ յէջս Արարատ ամսագրոյ՝ հրատարակել զանուանս նոցա գրեալս ի ստորև, որք գրամաւոր նուիրագործութեամբ նպաստ եղեալ են յայսմ՝ ամի ուսումնարանաց և չքաւոր երկսեռ ուսանողաց։

Հոգաբարձուք՝ Յովսէփ Աւագ քհնյ. Ռունիաթեանց
Սիմէօն Պողոսվեանց՝
Գրիգոր Սողոմոնեանց։

Հ. 42.

28 Ց--ՆՒ-Ի 1876 --Դ

Աստրախան։

ԱՆՈՒԱՆՔ	Ր--ԲԼԻ
Աղնուական Յովակիմ Յովհաննէսեան Աբգարեանց.	15
Մոսկովաբնակ Թադէոս Զաքարեան Շամխարեանց.	50
Գերազանցուհի Տ. Եղիսաբէթ Սերգէյեանց.	10
Աղնուհի Տ. Մանուշակ Արգարեանց. .	10
Տիկին Եղիսաբէթ Անդր. Փուանգիլեանց.	10
,, Կատարինէ Յարութ. Կոստենցեանց.	10
,, Կատարինէ Յակոբեան Կազաչկեանց	10
,, Կատարինէ Յով. Ջանումեանց. .	10
,, Հռիփսիմէ Գաբրիէլեան Կազաչկեանց.	10
,, Ոսկանն Փիլիպոսեան Իւանովեանց	10
,, Կատարինէ Դէորգեան Թէքէմեանց.	10
,, Ոսկանն Գրիգորեան Հախվերտեանց.	10
,, Եւայ Սարգսեան Մատաթեանց. .	10
,, Հռիփսիմէ Մկրտչեան Սուրբէկեանց	10
Գումար	185

ՀԱՐՅԱՔՆՆՈՒԹԻՒՆՔ ԱՇԱԿԵՐՏԱՑ

ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ ԵՐԿՈՒՑ ՍԵՌԻՑ ՀԱՅՈՑ ՍԻՄՖԷՐՈՊՕԼՈՑ.

Լոմբատրո-Ռիեան Էջերաց ամսագրոյ.

Սիմֆերոպոլի Հայոց ծխական երկսեռ Դպրոցին տարեկան հարցաքննութիւնը սկսեց ամսոյս 14 ին և չորս օր տևեց։ Հետաքրքրութեամբ ամեն օր գոնուեցայ և ականատես եղայ այս տարուան նոր ընթացքով կարդալ ու գրել սովորողներուն յառաջադիմութեանը։ Հոգաբարձուց կողմէն Դպրոցին տեսչութիւնը յանձնուած էր պարոն Նահապետ Յակոբեան Թօփճեանին. սա Գերմանացի Պ Կարֆին ընթացքովը և իւր բազմամեայ փորձերովը նոր այբենարան մի գրեց իրրև դասատետր վարժապետաց՝ և նոյն ընթացքին համեմատ երկու հատոր ընթերցարան, որք դեռ տպուած չեն։

Այս տարի հայերէն լեզուի ընթերցանութիւնը գիրը և թուաբանութեան սկզբունքը նոյն ընթացքին կանոններովը սովրեցան վարի բաժնի աշակերտուհիք և աշակերտք յառաջադէմ աղջկանց և տղայոց օգնականութեամբը և երկու ամսուան մէջ բոլորը ընթերցարան նստան։

Քննութեան մէջ ուշադրութեան արժանի էր ամենափոքր աղջկանց և տղայոց անսխալ կարդալը ոչ թէ միայն իրենց դասագիրքը՝ այլ և օտար գիրք և ձեռագիր՝ միայն թէ ծանր. և եթէ սխալէին՝ իսկոյն իրենք իրենց սխալը կուղղէին. տեսայ փոքրիկ աղջկանց մէջ հազարաւոր թիւեր կարդացող և գրող անսխալ, բերանացի փոքրաթիւ խնդիրներ լուծող և ճանաչող՝ թէ այն լուծածը հանումով կամ բաժանումով և կամ գումարով եղաւ։

Վերին և միջին բաժնի աշակերտուհեաց և աշակերտաց սովրածներուն քննութիւնն ալ տեսայ, բաւական յառաջադէմ աշակերտներ կային մանաւանդ աղջկանց մէջ, որոնցմէ վեցը շատ գովելի էին։

Առարկաներն են Կրօնագիտութիւն, Եկեղեցական՝ Սուրբ գրոց և աղգային պատմութիւն, Աշխարհագրութիւն, Թուաբանութեան չորս գործողութիւն, Հայերէն և Ռուսերէն լեզու և ձեռագործ՝ բոլորը երեք տարի միջոցաւ՝ ուսի և հարկաւ համառօտ։ Աշակերտաց և աշակերտուհեաց թիւը կհասնի մինչև 90։

Ամսոյս 19-ին շաբաթ օր կէս օրէն ետև պարգևատաշխութեան հանդէսը եղաւ Դպրոցին մէջ, ուր մեծ բազմութիւն կար արանց և կանանց. բոլոր աշակերտը և աշակերտուհիք միաբերան աղօթք երգեցին. պարոն Մկրտիչ Տէր Գէորգեան Ճենանեանցը գիտութեան կարևորութեանը վրայ ճառ մի խօսեցաւ և տղայք Դպրոցին յատուկ բարերար Մոմճեան Մերկեռիոս ազգային համաբարեմաղթական երգ երգեցին. Հայ և Ռուս վարժապետք իւրաքանչիւր առարկայից մի քանի աշակերտաց և աշակերտուհեաց հարցումներ արին ի աչս հասարակութեան, հայ և ռուս լեզուաւ առակներ և քերթուածներ ասել տուին բերանացի։ Ցառաջադէմ վեց աշակերտուհիք խօսակցութիւն մի պատրաստած էին նոյն հանդիսին անելու, որոյ նիւթն էր թէ որչափ վնասակար է մեր լեզուին մէջ օտար բառեր խառնելը և ծնողացն իրենց որդւոց հետ հայերէն չխօսիլը, բայց ուշ ըլլալով ժամանակն՝ տեսուչը ասել չտուաւ. ինքը համառօտ առենախօսութիւն մի արաւ, որուն մէջ յայտնեց թէ մեր ամենուս առաջին պարտքն է մեր այսպիսի սկզբնական դպրոցներուն մէջ մեր կրօնը, մեր ազգութիւնը, մեր ընտանեկան կենաց բարւոք կառավարութիւնը և մեր բարոյական պարտաւորութիւնները ճանչցնել տալ մեր զաւակաց և այս ընթացքը չունեցող ծխական դպրոցը ոչ թէ ազգին անօգուտ է, այլ և վնասակար, յորդորեց որ արդէն բաւական ապահովուած դպրոցը աւելի ազգին օգտակար անելու համար ժողովուրդը մէկ բան չմնայէ յոյսը Մոմճեան ազգիս ի վրայ միայն դնելով. և ապա յայտնեց որ թէ այս և թէ մեր ազգային ուրիշ գործերը կյառաջանան միայն սիրով, իսկ երկպառակութեամբ ունեցած այս օրուան մեր աղեկութիւններն ալ կնափանին որչափ ալ հաստատուն ըլլան, և վերջացաց այսու բանիւ թէ առեն՝ առելութիւնը և սիրենք սէրը, այն է մեր ազգութեան շունչն ու հոգին, այն է մեր ազգութեան կապն ու կեանքը. այս մտքիս վրայ խիստ աղջկունք սկսեցին քաղցրաձայն երգ երգել՝ որ ամենուս սիրտը շարժեց. և ապա մրցանակները և տարեկան վկայագրերը բաժնուեցան. դպրոցին տարեկան ել և մտից հաշիւն ալ կարդացուեցաւ և ամենքը սեղանին վրայ դիտուած գեղեցիկ ձեռագործները և վայելչագրութիւններն ալ տեսնելով և ուրախ սրտով և զուարթ դէմքով իրենց շնորհակալութիւնը յայտնելով թէ Տեսչին և թէ վարժապետաց՝ արձակուեցան։

Ուստի զայսմանէ հաղորդելով խմբագրութեանդ՝ կխնդրեմ՝ բարեհաճել տեղի տալ յօդուածդ դնելու պատուական ամսագրդդ մէջ ի տեղեկութիւն համայն ազգայնոցս։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԱՀՈՒՏԵԱՆ

Ի 25 Յունուարի 1876 թ.

է Սմիւրնայ.

ՀԱՐՑԱՓՆՆՈՒԹԻՒՆՔ ԱՇԱԿԵՐՏԱՑ ԾԽ. ԴՊՐՈՑԱՑ ԵՐԿՈՒՑ ՍԵՌԻՑ ՀԱՑՈՑ ԱՍՏՐԱԽԱՆԱՑ.

Լոմբարդո-Ռիան Աբարտ Ամոտրոյ.

Հոգաբարձութիւն Աստրախանայ Հայոց Հոգևոր ծխական երկսեռ դպրոցաց համաձայն կարգաւորութեան իւրոյ աւարտեաց զտարեկան հարցաքննութիւն երկսեռ ուսանողաց ի 21 Ներկայ Յունիս ամսոյ ի ներկայութեան Բարձր Սրբազան Առաջնորդի. որոյ ուրախութիւն սրտի, հայրական քաղցր ժպիտ պատկառելի երեսաց և զոհացուցիչ բանք բերանոյ՝ ծն անդր խրախուսեցին զուսուցիչս և զուսանողս. յաւուրս հարցաքննութեան ջանացողութեամբ և ուշիմ պատասխանեաց յամենայն աւանդեալ առարկայս ուսմանց յառաջադէմ հանդիսացան եօթն աղայք և տասն աղջկունք,